

Պարիզ, 27 հոկտ. (ն. տ.)

Ամսիս 25-ին, Սօրբօնի «Խիշըլիօ» սրահում, Պարիզի Հայ Ուսանողական Միութեան նախաձեռնութեամբ, հայկական տառերի 1500-ամեակը և հայ տպագրութեան 400-ամեակը տօնելու համար, տեղի ունեցաւ մի հանդէս: Կազմակերպիչ մասնախումբը հանդէսին պահանջված փայլը տալու համար՝ նախապէս հրաւէր էր կարգացել տեղական ազգային զանազան մարմիններին և անհատներին, որոնք, առանց կուսակցական խտրութեան, սիրայօժար փութացին իրանց մասնակցութեան բաժինը բերելու համազգային այդ մեծ տօնին:

Հանդէսի պատուոյ նախագահութիւնը ըստանձնել էր Պարիզի ակադեմիայի ըէկտօր՝ պ. Լիաուը:

Նշանակված ժամին, Պարիզի հոգևոր հովիւ Վոամշապուհ քահանան մի քանի խօսքով բացատրեց օրվայ տօնի նշանակութիւնը և խօսք տուեց Գուրգէն Թահմազեանին, որ որպէս ուսանողական կազմակերպիչ մասնախմբի ներկայացուցիչ՝ Միութեան շնորհակալութիւնները յայտնեց այն բոլոր մարմիններին ու անհատներին, որոնք պատասխանել էին իրանց ուղղված կոչին: Առիթից օգտվելով՝ նա համառօտ գծերով պատկերացրեց Պարիզի Հայ Ուսանողական Միութեան գործունէութիւնը իր 25-ամեայ գոյութեան ընթացքում, ցոյց տալով որ Ուսանողական Միութիւնը քաղաքական ոչ մի ձգտում չունենալով հանդերձ՝ սկզբից ի վեր հետաքրքրվել է հայ ազգային-հասարակական կեանքի բոլոր երևոյթներով և իր ոյժերի ներածին շափով օգտակար հանդիսացել:

Արշակ Զօպանեանը Պարիզի հայ գաղութի կողմից, Ֆրանսերէն լեզուով, շնորհակալութիւն յայտնեց ակադեմիայի ըկտօր Լիաուին, որ ոչ միայն բարեհաճեց հանդէսի պատուոյ նախագահութիւնը ստանձնել, այլ և այդ նպատակով Սօրբօնի սրահը տրամադրեց: Ապա ներկայ եղող Ֆրանսիացիներին նա բացատրեց հանդէսի նպատակը:

«Հայկական կուլտուրան է, որ մենք տօնում ենք այս րօպէիս, — շարունակեց նա — Հայաստանը՝ տառերի գիւտից և տպագրութեան հաստատութիւնից յետոյ՝ արևմտեան քաղաքակրթութեան դրօշակակիրը եղաւ Արևելքում: Իր գրական ու գեղարուեստական վերածնութեան մէջ Ֆրանսիան է, որ ամենամեծ դերը խաղաց: Եւ եթէ մենք այսօր հայ դպրութեան երկու անմոռաց ներկայացուցիչներին՝ ս. Սահակի և ս. Մեսրոպի յիշատակն ենք տօնում, դրանով միանգամայն մեր յարգանքն ենք մատուցանում Ֆրանսիական կուլտուրային»:

Արշակ Զօպանեանը այնուհետև հայերէն լեզուով բացատրեց ս. Սահակի և ս. Մեսրոպի մատուցած ահագին ծառայութիւնը հայ ազգին:

«Շնորհիւ Գրիգոր Լուսաւորչի՝ հայ ազգը իր յատուկ տեղը գրաւեց մարդկութեան մէջ, շնորհիւ ս. Սահակի և ս. Մեսրոպի՝ նա իր ազգային գոյութեան ինքնաձանաչութիւնը ունեցաւ: Հայ տպագրութեան հեղինակները եկան լրացնելու ս. Սահակի և ս. Մեսրոպի դործը:

«Հայաստանը բաժանված էր երկու պետութեանց միջև: Հայ թագաւորը լոկ մի կուսակալ էր: Ահա այդ անկման օրերին, ս. Սահակն և ս. Մեսրոպը ըմբռնեցին, որ ազգային գոյութեան վտանգի առաջն առնելու միջոցը ազգային դպրութիւն ստեղծելն էր: Արդիւնքը հայ ազգային վերածնութիւնը եղաւ: Ծնվեց հայոց գրաւոր մատենագրութիւնը, հայ լեզուն կատարելութեան հասաւ մինչ այն աստիճան, որ այդ շրջանը հայկական ոսկեդարն է կազմում:

«Եթէ մինչև ցարդ մեր եկեղեցին, մեր կրօնը, մեր մշակոյթը կարողացել ենք պահել դարերի ընթացքում, և եթէ այսօր էլ յոյսեր ունենք ապագայի նկատմամբ, մենք պարտական ենք ազգային այդ հզօր մտաւորական շարժման: Մէկ ձև կայ միայն մեր երախտագիտութիւնը արտայայտելու ս. Սահակին և ս. Մեսրոպին. դա այն է, որ մենք աւելի գիտակցութեամբ շարուն-

նակենք նրանց սկսած գործը»:

Դաշնակցութեան կողմից խօսեց Բարսեղ Շահապազը, պաշտպանելով այն թէզը թէ՛ կուլտուրական գործունէութիւնը կարող է զարգանալ քաղաքական ազատ պայմաններէ մէջ:

Այնուհետև Գարեգին Լևոնեանը, որպէս «կովկասահայ գրական համեստ աշխատաւորներից մէկը», իր ուրախութիւնը յայտնեց, որ Պարիզում առիթ ունեցաւ ներկայ լինելու մի այդպիսի շքեղ հաւաքոյթի: Նա շատ հետաքրքրական ծանօթութիւններ տուեց հայ տպագրական արհեստի էվօլյուցիայի մասին:

Վերջացնելով իր ճառը, նա շեշտեց այն միտքը թէ՛ քաղաքակրթական գործը մնայուն գործն է, մինչդեռ ծայրայեղ յեղափոխական միջոցները ժամանակաւոր են:

Գէորգ Տէօվլէթեանը կարդաց իր հեղինակած մի ոտանաւորը որպէս ձօն՝ ուղղված ս. Սահակի և ս. Մեսրոպի յիշատակին:

Ս.~դ. Հնչակեան կուսակցութեան կողմից՝ բանասէր Դաւիթ-բէկը, Փրանսերէն լեզուով, կարդաց մի գիտական ուսումնասիրութիւն, որ ժամանակի սղութեան պատճառով ստիպված եղաւ համառօտել: Նա ներկայացրեց հայերի պատմական ծագումը, նրանց ազգային ու քաղաքական միութեան զարգացումը, տառերի գիւտը և հայկական մատենագրութիւնը: Ծանկալի էր, որ նրա այդ ուսումնասիրութիւնը առանձին բրօշուրով լոյս ընծայվէր:

Այնուհետև Պօղոս Նուպար փաշան՝ կազմակերպիչ մասնախմբի հրաւերին պատասխանելով՝ բացատրեց հայկական հարցի ներկայ դիրքը:

«Պետութիւնները, — ասաց նա, — այսօր լուրջ պատճառներ ունեն հայկական հարցով զբաղվելու: Հայկական բարենորոգումները այսուհետև կապված են օսմանեան պետական ամբողջականութեան սկզբունքների հետ: Թիւրքիան իր գոյութիւնը կարող է պահել միայն մի պայմանով, այն, որ ներկայ անիրշխանական դրութիւնը վերանայ հայկական նահանգներից և հայերի համար քաղաքական ու քաղաքացիական մի նոր ըէֆիմ հաստատվի»:

Կաթողիկոսական պատուիրակութեան նախագահը այնուհետև խօսեց Կ. Պօլսի դեսպանների մշակած ըէֆօրմների նախագծի մասին և ցոյց տուեց, որ պետութիւնները, գլխաւորապէս Խուսաստանն ու Գերմանիան, այժմ համաձայնութեան են եկել:

Պօղոս Նուպար-փաշայից յետոյ, Դաշնակցութեան իդէօլօգ Վարանդեանը, Փրանսերէն լեզուով, հայ ժողովրդի երախտագիտական զգացումները յայտնեց Պօղոս Նուպար-փաշային, որ մի տարուց ի վեր եռանդազին աշխատում է հայկական դատի համար:

«Թող միւս հարիւրաւոր հայ հարուստները կարձրեն Պօղոս Նուպար փաշայի այդ անսովոր ճիւղերի առաջ» — աւելացրեց նա:

Հետաքրքրական է իմանալ, թէ Դաշնակցութեան միւս անդամներն էլ այդպէս են մտածում առհասարակ թէ՛ միայն Վարանդեանն է, որ բաժանում է հայկական շէզոք շրջանների այս կարծիքը:

Վարանդեանից յետոյ, Պարիզի հոգևոր հովիւ Վռամշապուհ քահանան փակեց հանդէսը, իր ուրախութիւնը յայտնելով որ Պարիզի հայ գաղութը, առանց քաղաքական դաւանանքի խտրութեան, արժանաւայել կերպով տօնեց ազգային մեծ յօբելեանը:

Վերջացնելուց առաջ, մասնաւոր գովեստով պէտք է արձանագրել օրինորդներ Բարայեանի և Կալանօղեանի բարեհաճ մասնակցութիւնը, որոնք բուն ծափերի մէջ մի քանի անգամ երգեցին կովկասեան ծանօթ ժողովրդական երգերը:

Օր. Կալանօղեանը, որպէս երգչուհի, իր մեղմ ու գրաւիչ ձայնով շատ լաւ ապագայ է խոստանում և, ինչպէս լսում ենք, շուտով մասնակցելու է Պարիզի կօնսերվատօրիայի մուտքի մրցման, որ բաւական զփուար է:

Ե. Սաֆրաստ